ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

8 դեկտեմբերի հինգշաբթի 2022
2022տպագրության ԺԱ տարի

177
(2657)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՄ 150

2022 թվականի ապրիլի 13-ին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Ազգային ժողովում ասել էր, թե այն ուժերը, որոնք 1998 թվականին իշխանությունից հեռացրին առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին փուլային տարբերակով Ղարաբաղի հարցի լուծման գնալու մտադրության համար, 20 տարի անց հանգել են նույն կետին՝ սեղանին թողնելով փուլային կամ, Փաշինյանի ձեւակերպմամբ, «հիպերփուլային» լուծման տարբերակ: «Այսինքն՝ փուլային լուծման դեմ իշխանափոխություն անող մարդը եկել, հանգել է նորից փուլային լուծման, այսինքն՝ 98-ի փուլային տարբերակից եկել, հասել ենք 2018-ի հիպերփուլային տարբերակին», - նշել էր նա: Բացի այդ, ըստ նրա՝ այժմ նախկին իշխանությունները բանակցային չստորագրված թղթերում առկա գաղափարները ներկայացնում են որպես հաղթանակ, եւ Սերժ Սարգսյանն անկեղծ էր, երբ ասում էր, որ Հայաստանը պատրաստ էր զիջել 7 շրջանները: Այդ նույն օրը Նիկոլ Փաշինյանի հայտարարություններին անդրադարձավ ՀՀԿ նախագահ, ՀՀ երրորդ նախագահ Սերժ Սարգսյանը, որը Նիկոլ Փաշինյանին մեղադրեց ստախոսության համար: «Վարչապետի աթոռը զբաղեցնող անձը ԱԺ-ի այսօրվա ելույթում հերթական անգամ ի ցույց դրեց ստախոսի եւ մանիպուլյատորի իր ողջ էությունը: Նա կրկին ստում է եւ փորձում մոլորեցնել հանրությանը, այդ թվում՝ ԼՂ հիմնախնդրի բանակցային գործընթացի մասին խոսելիս»,- հայտարարել է նախկին նախագահը՝ պնդելով, որ իր պաշտոնավարման ամբողջ ժամանակաշրջանում երբեք չի բանակցել Արցախի հիմնախնդիրը փուլային տարբերակով լուծելու շուրջ: «Վարչապետի աթոռը զբաղեցնող անձը կամ մինչեւ հիմա չի հասկացել փուլային եւ փաթեթային տարբերակների տարբերությունը, կամ գործի է դրել իր հիմնական զենքը՝ մանիպուլյացիան», - շեշտել էր Սերժ Սարգսյանը՝ հավելելով, որ փաթեթային տարբերակը չի կարող կյանքի կոչվել մեկ օրում կամ մեկ ժամում, այլ միանշանակ պետք է լուծվի փուլերով: Սա միակ դեպքը չէ, երբ Նիկոլ Փաշինյանը մանիպուլացնում է արցախյան հարցի բանակցային թեման եւ մշտապես մեղադրում նախկիններին դրանք տապալելու կամ ձախողելու համար:



Նախկիններին կոռուպցիայի, թալանի, կաշառակերության համար մեղադրող հեղափոխական իշխանության ներկայացուցիչները շարունակում են օգտվել կաշառակեր պաշտոնյաների ծառայություններից: ՀՀ ազգային ժողովում, պարզվում է, բարձր պաշտոն զբաղեցնողներից է նաեւ նախկինում դատվածություն ունեցող Հակոբ Հաջի-Հակոբյանը: Նա, որ այժմ Ազգային ժողովի աշխատակազմի արարողակարգի վարչության պետն է, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների, դեռեւս 2013-ին, երբ աշխատել է ՀՀ արտաքին գործերի նախարարության հյուպատոսական վարչության պետ, կաշառք վերցնելու կասկածանքով (գումարի դիմաց կեղծ վիզաներ է տրամադրել) դատապարտվել է երկու տարվա ազատազրկման: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Հաջի-Հակոբյանի դուստրը, որ ՀՀ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանի նշանածն է, նույնպես խորհրդարանում է աշխատում՝ Արտաքին հարաբերությունների վարչությունում: Իհարկե, նա ո՛չ առաջինն է, ո՛չ վերջինը, որ չարաշահել է զբաղեցրած պաշտոնը: Ուշագրավն այստեղ այն է, որ սեւ ու սպիտակի բաժանում արած իշխանությունը, փաստորեն, տարիներ առաջ կեղծ վիզա տրամադրելու համար կաշառք վերցրած անձին նոր, առավել բարձր պաշտոն է տվել: Ինչպես ասում են՝ օ՛ մարդիկ, օ՛ բարքեր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեն որոշել է կարճել Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահներ Ռուբեն Վարդազարյանի եւ Գագիկ Ջհանգիրյանի աղմկահարույց զրույցի մասով հարուցված քրեական վարույթը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկությունը փորձեց անձամբ պարզել ԲԴԽ նախկին նախագահ Ռուբեն Վարդազարյանից, որը հաստատեց մեր ունեցած տեղեկությունը. «Այո՛, որոշել են կարճել քրեական վարույթը եւ մեզ ժամանակ են տվել ներկայացնել միջնորդությունները, ինչը ներկայացվել է: Սպասում եմ միջնորդությունների պատասխանին, որից հետո հանգամանալից կխոսենք կարճման հիմքերի մասին եւ կմեկնաբանենք իրավիճակը», - նշեց նա: Հիշեցնենք, որ հունիսի 20-ին հրավիրված ասուլիսին Ռուբեն Վարդազարյանը հրապարակել էր ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի հետ ունեցած զրույցի ձայնագրությունը, որը մերկացնում էր ողջ դատական համակարգը (թե ինչպես են Գագիկ Ջհանգիրյանի «վզին դրվում» ինչ-ինչ քաղաքական հրահանգներ): 6 ամիս քննելով գործը՝ Քննչական կոմիտեն տուժող չճանաչեց Ռուբեն Վարդազարյանին, քրեական վարույթով որեւէ մեկը մեղադրյալ չներգրավվեց, եւ, ահա, որոշել են քրեական վարույթը կարճել: Իհարկե, սպասելի էր, քանի որ ի սկզբանե այդ ձայնագրության հրապարակումը ոչ թե քրեական, այլ քաղաքական հրահանգների ապացույց էր, բայց որ քրեական վարույթը քրեական ավարտ չի ունենում միայն այն պատճառով, որ արդեն երկու կողմերն էլ՝ թե՛ Վարդազարյանը, թե՛ Ջհանգիրյանը այլեւս պաշտոնյաներ չեն, խիստ ուշագրավ էր: Որպես համեմատություն՝ նշենք, որ նույն Ռուբեն Վարդազարյանի նկատմամբ քրեական գործ էր հարուցվել՝ նաեւ նախկին դատավոր, ԱԱԾ տնօրենի նորանշանակ տեղակալ Անդրանիկ Սիմոնյանի հաղորդման հիման վրա, եւ այդ գործի քննությունը դեռ շարունակվում է, թերեւս, այն պատճառով, որ Անդրանիկ Սիմոնյանը պաշտոնյա է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հայաստանի քննչական մարմիններում այս ընթացքում խառնաշփոթ է: Բանն այն է, որ քննիչները հայտնվել են լուրջ խնդրի առջեւ եւ իրենց վարույթներում քննվող քրեական գործերով չեն կարողանում քննության ավարտ հայտարարել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նախաքննական մարմինների ղեկավարները հանձնարարել են քննիչներին իրենց վարույթներով առկա գործերով ավարտ հայտարարել եւ տարին ամփոփել, սակայն քննիչները նշել են, որ չեն կարող ավարտ հայտարարել, քանի որ ծանրաբեռնվածությունը նրանց հնարավորություն չի տվել քրեական վարույթներով ողջ աշխատանքը ավարտել եւ այն դատարան ուղարկել: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մեկ այլ իրականություն էլ կա. այս իրավիճակին զուգահեռ՝ որոշ քննիչներ էլ ստիպված մի շարք գործերով ավարտ են հայտարարել եւ արդարացել՝ ինչ կլինի հետագայում դատարանում, իրենք պատասխանատվություն չեն կրի: Այսինքն՝ իրավապահ համակարգի ներկայացուցիչներն այս պահին չեն կարողանում իրենց վարույթում առկա գործերի քննությունը ըստ պատշաճի իրականացնել եւ ավարտել:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՎՍՏԱՀ ԵՄ՝ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ ՉԻ ՏԵՂԱԴՐՎԻ

Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհը փակելուց հետո պաշտոնական Բաքուն դեռեւս չի հանդարտվում: Ադրբեջանական «ակտիվիստները» ամենատարբեր առիթներով խոսում են Ստեփանակերտ կամ այլ համայնքներ այցելելու մասին: Չնայած ռուս խաղաղապահները տարածքը վերահսկում են, բայց տեղի բնակչությունն ու Արցախի իշխանություններն են անհանգստացած, թե ինչ հետին նպատակ կարող են ունենալ ադրբեջանցիները:

Հենց դա է պատճառը, որ ԱՀ ԱԺ խմբակցությունների ղեկավարները հանդիպել են Արցախում ՌԴ խաղաղապահ ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Անդրեյ Վոլկովի հետ: Հանդիպման առանցքում վերջին օրերին ադրբեջանցիների կողմից իրականացված սադրանքներն էին:

«Արդարություն» խմբակցության ղեկավար Դավիթ Գալստյանի հետ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ստեղծված իրավիճակի եւ հանդիպման մանրամասների մասին:

-Պարոն Գալստյան, ի՞նչ մանրամասներ կարող եք փոխանցել Արցախում ՌԴ խաղաղապահ ուժերի հրամանատար Անդրեյ Վոլկովի հետ հանդիպումից:

-Այո, հանդիպումը եղել է: Հինգ խմբակցությունների ղեկավարները հանդիպում են պահանջել ռուս խաղաղապահների հրամանատարից, եւ երբ տեղի է ունեցել այդ հանդիպումը, քննարկվել են մի շարք հարցեր՝ բնապահպանական, էկոլոգիայի անվան եւ պատրվակի տակ ադրբեջանցիների կողմից կազմակերպված հերթական սադրանքի մասով: Այդ ընթացքում ռուս խաղաղապահների հրամանատարի տված բացատրությունը, որ, այսպես ասած, պետք է «մինի տամոժնյա» դրվեր... այդ մտահոգությունները բարձրացվել են, ու փոխանցվել է նաեւ ժողովրդի մտահոգությունը: Մենք մեր անհամաձայնությունն ենք հայտնել, որ մեզ համար անընդունելի է այդ բոլոր լրացուցիչ ինչ-որ վերահսկողական կամ անցակետեր տեղադրելը: Նրա կողմից ընդունելի է եղել, ավելի ճիշտ՝ պարզաբանում է տրվել, որ «տամոժնյա» ասելը սխալ է, քանի որ այդպիսի բան չի լինելու, այլ լինելու է, իր իսկ մեկնաբանությամբ, սկսներ սարքավորում, որի մասով մենք նույնպես մեր մտահոգությունը, վրդովմունքն ու անհամաձայնությունն ենք հայտնել: Ասել ենք, որ դա անթույլատրելի է եւ լրացուցիչ խոչընդոտներ է մեզ համար հարուցելու մեր ամենօրյա կյանքը կազմակերպելու համար: Այդ հարցը վերջնական որոշված չէ, քննարկման փուլում է, ինձ թվում է՝ մենք համոզիչ կերպով կարողացել ենք նրան ներկայացնել մեր բոլորի մտահոգությունները, եւ ավելի քան համոզված եմ, որ այդ սարքավորումը չի տեղադրվելու:

-Այսինքն՝ ամեն դեպքում, ինչ-որ բան տեղադրելու պայմանավորվածություն կա՞:

-Ոչ, սարքավորում տեղադրելը կամ նման որեւէ այլ բան մեզ համար անընդունելի է: Նորից եմ կրկնում՝ ես համոզված եմ, որ դա չի լինելու:

-Ձեր կողմից, մեր կողմից պարզ է, որ անընդունելի է, բայց, փաստորեն, ռուսական կողմի հետ քննարկումներ կան այդ սկսաներները տեղադրելու առումով:

-Քննարկումներ կան, այո: Ադրբեջանական կողմը բացատրում է նրանով, որ, իբր թե, այդ ճանապարհով, որը ռուս խաղաղապահների վերահսկողության ներքո է, զենք-զինամթերք է տեղափոխվում: Ադրբեջանը ցանկանում է, որ անգամ այդ սարքերը հենց ադրբեջանական կողմը տրամադրի: Այդ ստուգումները վերաբերելու են միայն բեռնատարներին, այլ ոչ թե մարդատար ավտոմեքենաներին: Բայց, նորից եմ կրկնում, մեր՝ հինգ խմբակցությունների կողմից ասվել է, որ դա անընդունելի է ոչ միայն քաղաքական ուժերի, այլեւ Արցախում ապրող բոլոր քաղաքական ուժերի համար:

-Իսկ եթե, ամեն դեպքում, որոշում կայացվի որեւէ բան տեղադրելու հարցում, ապա այն որտե՞ղ է տեղադրվելու: Կա՞մ հստակություն:

-Տեղադրվելու է հենց առաջին անցակետում, այսինքն՝ երբ որ Հայաստանի սահմանից մտնում ենք Լաչինի միջանցք:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԴԺԳՈՀՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ Է ՊԱՀԱՆՋԵԼ

ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՀՀ կառավարության 2022 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնագրմամբ՝ ՀՀ-ում թոշակները ավելացել են երեք հազար ՀՀ դրամով, որի հետեւանքով բազմաթիվ քաղաքացիներ զրկվել են 18 հազար ՀՀ դրամ սոցիալական նպաստից:

Քաղաքացիներից բազմաթիվ ահազանգեր եմ ստանում նպաստի գումարից զրկվելու վերաբերյալ:

Ի՞նչ հարց է լուծել կառավարությունը այս որոշմամբ. գործադիրից նշում են, թե սոցիալական խնդիրների լուծմանը միտված կարեւորագույն գործիք է սա, որը տեղ է գտել Հայաստանի Հանրապետության կառավարության 2021-2026 թթ. ծրագրում. մի՞թե սա կարելի է համարել սոցիալական խնդիրների լուծման գործիք, երբ հազարավոր քաղաքացիներ զրկվում են համեմատաբար ավելի բարձր եկամտից:

Սա անթույլատրելի է եւ կոպտորեն խախտում է մարդու իրավունքները, Սահմանադրության մեջ արտացոլված սոցիալական, իրավական ու ժողովրդավարական պետություն կերտելու նպատակադրումներն էլ՝ աղավաղում: Հարցը խիստ մտահոգիչ է եւ հրատապ կարգավորման ենթակա, որի կապակցությամբ էլ համապատասխան գրությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունից պարզաբանումներ եմ պահանջել: Ինչո՞ւ են քաղաքացիները զրկվել սոցիալական նպաստից, եւ ե՞րբ է լուծվելու խնդիրը»:

ՀԱԲՈՒՑՎԵԼ Է ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

Ուժային կառույցների մեր աղբյուրները հայտնում են, որ հարուցվել է քրեական գործ, որի առանցքում քաղաքապետարանի ամենաառանցքային պաշտոնյաներից մեկն է՝ աշխատակազմի քարտուղարի Ժ/պ Սեյրան Մեջլումյանը: Մեզ հայտնում են, որ քրգործը «նախաձեռնել է» Հակակոռուպցիոն կոմիտեն ու ՀՀ ոստիկանությունը. այն կապված է ինքնակամ շինությունների օրինականացման գործընթացների հետ: Ուժայինների ուշադրության կենտրոնում Մեջլումյանի հայտնվելը մեր աղբյուրները անակնկալ չհամարեցին, ավելին՝նշեցին, որ քաղաքապետի մերձավոր թիմակիցների շրջանում որոշակի խուճապային տրամադրություններ առկա են արդեն տեւական ժամանակ: Հաջողվեց պարզել, որ քրեական գործը, որով անցնում է աշխատակազմի քարտուղարի Ժ/Պ-ն, ներառում է 10-ից ավելի առանձնացված դեպք: Ըստ իրավապահ համակարգի մեր աղբյուրների՝ դեպքով ձեռք բերված ապացույցների մի մասն է հայտնի Հրաչյա Սարգսյանին ու իր մերձավոր թիմակցին, ուժայինների կողմից դեռեւս տարվում են աշխատանքներ, եւ՝ոչ անարդյունք: Այն հարցին, թե ինչն է հիմք հանդիսացել աշխատակազմի քարտուղարին գործի շրջանակներում ներգրավելու համար, պատասխանեցին, որ իրացվել են օպերատիվ տեղեկություններ, մյուս կողմից՝ կասկածներ են հարուցել ինքնակամ շինությունների գործերի ընտրության ու դրանց լուծման ուսումնասիրությունները: Հարցերին մոտեցել են տարերայնորեն, առանց հստակ մեթոդոլոգիայի: Ամենայն հավանականությամբ, հիմքում եղել են օպերատիվ տեղեկություններ, ինչից հետո էլ սկսել են ուշադրություն դարձնել վերոնշյալ անձին: Քննչականի մեր աղբյուրները հայտնեցին, որ հավանաբար սկզբնական փուլում Մեջլումյանի լիազորությունները կկասեցվեն գործը քննող քննիչի միջնորդությամբ: Հավելենք, որ վերջին շրջանում հետաքրքիր տեղեկություններ են ստացվում Երեւանի քաղաքապետի ու նրա շրջապատի գործունեության մասին, որոնց կանդրադառնանք հընթացս:

5 ՄԼՆ ԴՐԱՄԻ ԳՈՒՅՔ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը պատրաստվում է 5 մլն 430 հազար դրամի նոր գույք ձեռք բերել: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այդ նպատակով վերաբաշխում է կատարվելու ՀՀ 2022 թվականի պետական բյուջեի մասին նախագծում: Մասնավորապես, ըստ նախագծի՝նախատեսվում է առաջնահերթ ձեռք բերել չիրկիզվող պահարաններ, գրասեղաններ, աթոռներ եւ բազկաթոռներ: ՀՀ արտաքին գործերի նախարարությունը նաեւ հիմնավորում է ներկայացրել, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության հաշվեկշռում հաշվառված գրասենյակային կահույքը նախարարությանն է հանձնվել 2016 թվականին՝ Վազգեն Սարգսյան 3 հասցեում տեղակայված Կառավարական 2 նոր մասնաշենք տեղափոխվելու ժամանակ: Կահույքն ունի որակական լուրջ խնդիրներ, զգալի մասը վնասված է ու մաշված: Վնասված կահույքի մեծ մասը դարձել է շահագործման համար ոչ պիտանի եւ ենթակա չէ վերանորոգման: Եվ, ահա, ՀՀ կառավարության որոշման նախագծի ներկայացման անհրաժեշտությունը առաջացել է նախարարության աշխատանքային պայմանները բարելավելու, գույքը թարմացնելու նպատակով: Բացի այդ, նոյեմբերի 27-29-ին Հայաստանում տեղի է ունեցել «Հայաստան-Հնդկաստան. հազարամյա հարաբերությունների նոր խթաններ» խորագրով առաջին միջազգային համաժողովը, որի ծախսերի փոխհատուցման համար էլ անհրաժեշտ է 8 մլն 500 հազար դրամ: Այսինքն՝ այս երկու միջոցառումների համար համատեղ ԱԳՆ-ն կստանա 13 մլն դրամից ավելի գումար:

ՆԱԽԱԳԻԾԸ ԸՆԴՈՒՆՎԵՑ

Երեկ Ազգային ժողովի նիստում 65 կողմ, 5 դեմ, 22 ձեռնպահ ձայներով ընդունվեց եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգը: Այն ամբողջությամբ կներդրվի 3 տարվա ընթացքում, առաջին հայտարարագրերը պետք է ներկայացվեն մինչեւ 2024-ի ապրիլի 20-ը: Առաջին փուլի շրջանակում ընդգրկված են հետեւյալ անձինք՝ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված պետական ծառայության, համայնքային ծառայության եւ հանրային պաշտոններ զբաղեցնող քաղաքացիներ, նոտարները՝ անձնական եկամուտների մասով: Հաջորդ ենթախումբը ձեռնարկատիրական գործունեության հետ ուղիղ կամ անուղղակի կապված ֆիզիկական անձինք են՝ռեզիդենտ հանդիսացող ՀՀ քաղաքացիներ, որոնք 2022 թվականի արդյունքներով 1 մլրդ դրամ եւ ավել համախառն եկամուտ հայտարարագրած ՀՀ ռեզիդենտ առեւտրային կազմակերպությունների բաժնետերեր են, նաեւ ռեզիդենտ քաղաքացիներ, որոնք 2023-ի ընթացքում ստացել են 20 մլն դրամ կամ ավել փոխառություններ՝ նշված առեւտրային կազմակերպություններից: 2024 թվականից նախատեսվում է այդ շրջանակն ընդլայնել աշխատանքային պայմանագրերով աշխատանք կատարողներով, նաեւ քաղաքացիական պայմանագրերի հիման վրա ծառայություններ մատուցող եւ աշխատանքներ կատարող ռեզիդենտ քաղաքացիներով: 2025 թվականի հաշվետու տարվա եւ դրան հաջորդող տարիներին հայտարարագիր պետք է ներկայացնեն ՀՀ բոլոր քաղաքացիները:

ՈՐՈՒՄ ՍԱՆԴԱՏ ԿՏԱ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն այս պահի դրությամբ Ազգային ժողովի նախագահի ստորագրությամբ չորս արձանագրություն է ստացել, որ վերաբերում է պատգամավորներից մանդատը վերցնելուն: Նրանք բոլորն էլ «Հայաստան» խմբակցության պատգամավոր են՝ Արամ Վարդեւանյանը, Վահե Հակոբյանը, Հռիփսիմե Ստամբուլյանն ու Ելենա Կիրակոսյանը: Վերջին երեքը, նշենք, ԱԺ-ում ու «Հայաստան» դաշինքում գործունեությունը դադարեցրած «Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամներ են: ԿԸՀ նախագահի մամուլի քարտուղար Սեդա Ղուկասյանն ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ այս պահի դրությամբ «Հայաստան» դաշինքի համամասնական ցուցակի 4 անձի՝ նոտարական հաստատումով ինքնաբացարկի դիմում են ստացել: «Ռոբերտ Հայրապետյանը, Ռուբեն Մելքոնյանն ու Ռիմա Ղազարյանն ինքնաբացարկի դիմումով հրաժարվել են մանդատ վերցնել»,- նշեց Ղուկասյանը: Նշենք, որ ինքնաբացարկի դիմում ներկայացնելու մասին Fаčebook-ի իրենց էջերում նաեւ Սայաթ Շիրինյանն ու Մարիա Պետրոսյանն են տեղեկացրել: Ղուկասյանը նշեց նաեւ, որ Արամ Վարդեւանյանի արձանագրության ժամկետը դեկտեմբերի 9-ին է լրանում, ու մինչ այդ կամ այդ օրը ԿԸՀ-ն նիստ կանի ու Վարդեւանյանին փոխարինող պատգամավորին մանդատ տալու արձանագրություն կկազմի: Կարող ենք ենթադրել, որ նա ԱԺ «Հայաստան» խմբակցության ղեկավար Սեյրան Օհանյանի հասարակական հիմունքներով օգնականն է՝ Միեր Սահակյանը: Ըստ «Հայաստան» դաշինքի համամասնական ցուցակի՝ պատգամավորական մանդատ կարող են ստանալ Միեր Սահակյանը, Արփինե Վարդանյանը, Արման Ղազարյանը եւ Դավիթ Սահակյանցը:

ՏՆԱԿՆԵՐ

34 ՏԱՐԻ ԱՆՑ ԷԼ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎԵԼ

Սպիտակի երկրաշարժից 34 տարի անց անգամ աղետի գոտի եզրույթը դեռ առկա է, քանի որ տնակներում ապրող մարդկանց բնակարանային խնդիրը ամբողջությամբ չի լուծվել:

Իսկ իշխանության գալուց հետո ի՞նչ էր խոստանում Նիկոլ Փաշինյանը, եւ ի՞նչ ունենք այսօր. 2020 թվականի հունվարի 24-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Կապան քաղաքում լրագրողների հետ հանդիպմանը հերթական 100 փաստը ներկայացրեց եւ խոսեց աղետի գոտու տուժած ընտանիքներին բնակարանով ապահովելու խնդրի մասին: Նա այդ ժամանակ հայտարարել էր, որ 2020 թ. կլուծվի երկրաշարժի հետեւանքով անօթեւան մնացած 453 ընտանիքների բնակարանի խնդիրը, որի համար բյուջեից հատկացվել էր 3 մլրդ դրամ: Ինչպես պարզվեց, այդ ընտանիքների կեսի դեպքում նախորդ տարվա բյուջեից 1.3 մլրդ դրամ արդեն իսկ հատկացվել էր, եւ այս տարվա բյուջեով հատկացված գումարը ուղղվելու էր անօթեւան ընտանիքների մյուս կեսի բնակարանների կառուցմանը:

«Փաստերի ստուգման հարթակ»-ը պարզել էր, որ վարչապետը 227 ընտանիքի բնակարանով ապահովելու լուծված հարցը ներկայացրել է եւ՛ արդեն իսկ կատարված աշխատանքների ցանկում, եւ՛ 2020-ին կատարվելիք աշխատանքների ցանկում: Բացի այդ, Նիկոլ Փաշինյանի մեկ այլ պնդմամբ՝ նախկինում բնակարաններով էին ապահովվել չնչին թվով ընտանիքներ: «Նախկինում յուրաքանչյուր տարի բնակարանով ապահովվել է 40-45 աղետից տուժած ընտանիք, այսինքն՝ 10 անգամ ավելանում է այդ ծավալը»,- հայտարարել էր վարչապետը: Մինչդեռ ինչպես ներկայացրել է կառավարության ֆեյսբուքյան պաշտոնական էջը եւ հայտարարել է Քաղաքաշինության կոմիտեի ներկայացուցիչը, ծրագրի մեկնարկից մինչեւ 2017 թվականը ներառյալ, բնակարաններով են ապահովվել 4838 ընտանիք, այսինքն՝ տարեկան միջինում 483 ընտանիք, ինչը մոտ տասն անգամ ավելին է, քան Նիկոլ Փաշինյանի հայտարարած ցուցանիշը:

Ամփոփելով փաստենք, որ տարեսկզբին վարչապետի կողմից հայտարարված՝ 453 ընտանիքներին բնակարանով ապահովման մասին հայտարարությունը թեեւ ճիշտ է, սակայն դրա կեսի ֆինանսավորումն արդեն իսկ կատարվել էր նախորդ տարի, իսկ նախկինում յուրաքանչյուր տարի 40-45 ընտանիքի բնակարանով ապահովելու մասին հայտարարությունը կեղծ էր եւ նվազեցված ավելի քան 10 անգամ:

ArmLur.am-ը նկատում է՝ 2018թ. նոր կառավարությունը հայտարարեց «աղետի գոտի» եզրույթը շրջանառությունից հանելու մտադրության մասին, եւ, վարչապետի որոշմամբ, աշխատանքային խումբ ստեղծվեց, որը պետք է փաստագրեր, տվյալներ հավաքեր պետական աջակցությամբ իրականացված բնակապահովման ծրագրերի իրականացումից հետո աղետի գոտու բնակավայրերում դեռ առկա ոչ հիմնական շինությունների ու դրանցում ապրող մարդկանց մասին: Արդյունքում 2022-ի հոկտեմբերին կառավարությունը համապատասխան որոշում ընդունեց: Այսօր արդեն պարզ դարձավ, որ կառավարությունը մտադիր է առաջիկա 5 տարում աղետի գոտին վերջնականապես ազատել տնակային տնտեսություններից: Այդ նպատակով դեռ այս տարվա հոկտեմբերին գործադիրը որոշում էր կայացրել մինչեւ 2027-ը ապամոնտաժել համայնքային սեփականության տարածքներում տեղադրված կամ կառուցված ոչ հիմնական շինությունները, իսկ բնակիչներին վերաբնակեցնել:

Նոր ծրագրի շահառու բոլոր ընտանիքները վեց ամսում պետք է լքեն տնակները ու քանդեն դրանք, այլապես դրա իրավասությունը կհանձնվի համայնքային իշխանությանը: Ապամոնտաժման ենթակա կառույցներն ամենաշատը Գյումրիում են, Սպիտակում եւ Վանաձորում: Դրանց 60 տոկոսը տեղադրված են հենց համայնքային նշանակության հողերի վրա:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱԳՆ-Ն ՀԱՍՏԱՏԵՑ

Ֆրանսիայի Հանրապետության Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Կատրին Կոլոննան հայտարարել է հոկտեմբերի 20-ից Հայաստանում տեղակայված ԵՄ դիտորդական առաքելության մանդատը երկարաձգելու անհրաժեշտության մասին: Այս մասին նա հայտնել է դեկտեմբերի 6-ին կառավարություն-ԱԺ հարցուպատասխանի ժամանակ:

«Սահմանը մշտադիտարկելու միջոցով այս առաքելությունն իսկապես սահմանափակել է էսկալացիայի վտանգը»,- ասել է Կոլոննան:

Կոլոննան նշել է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ լարվածությունը չի թուլացել: Նախարարը վերահաստատել է Ֆրանսիայի եւ Եվրոպական Միության աջակցությունը Հայաստանին եւ խոստացել, որ շարունակական ջանքեր կգործադրի տարածաշրջանում խաղաղության հաստատման համար:

ՄԱՆԴԱՏԸ ՉՎԵՐՑՐԵՑ

«Վերածնվող Հայաստան» կուսակցության անդամ Մարիա Պետրոսյանը հայտնել է, որ չի վերցնի պատգամավորական մանդատը. «Այսօր պաշտոնական դիմում եմ ներկայացրել ՀՀ ԱԺ պատգամավորական մանդատը չվերցնելու վերաբերյալ: Որոշումս, կարծում եմ, միանգամայն պարզ ու հասկանալի է՝ հաշվի առնելով Ազգային Ժողովից հեռանալու՝ «Վերածնվող Հայաստան» կուսակցության որոշումը»:

Հիշեցնենք, որ ArmLur.am-ը գրել էր, որ Մարիա Պետրոսյանը չի վերցնի մանդատը:

ԱՐՑԱԽԻ ՆԱԽԱԳԱՀԸ՝ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի գլխավորած պատվիրակությունը դեկտեմբերի 5-ին աշխատանքային այցով ժամանել է Ֆրանսիայի Հանրապետություն: Ինչպես հայտնում են Արցախի նախագահի աշխատակազմից, դեկտեմբերի 6-ին տեղի են ունեցել պատվիրակության հանդիպումները Ֆրանսիայի Հանրապետության Սենատի բոլոր խորհրդարանական խմբերի ղեկավարների եւ Ազգային ժողովի բոլոր խմբակցությունների պատասխանատուների հետ:

Հանդիպմանը քննարկվել են ադրբեջան-նաղարաբաղյան հակամարտության կարգավորմանը, Արցախ-Ֆրանսիա կապերին եւ տարածաշրջանային գործընթացներին վերաբերող հարցեր: Հատուկ ուշադրություն է դարձվել միջխորհրդարանական կապերի զարգացմանը:

Խոսելով Ֆրանսիայի, մասնավորապես՝ նրա օրենսդիր մարմնի հետ հարաբերությունների զարգացման հարցում Արցախի շահագրգռվածության մասին՝ նախագահը բարձր է գնահատել Սենատի եւ Ազգային ժողովի հետեւողական ջանքերը՝ ուղղված ադրբեջան-նաղարաբաղյան հակամարտության կարգավորմանը: Այցի ընթացքում նախատեսված են նաեւ այլ հանդիպումներ:

«ՉԵՆՔ ԲԱՑԱՌՈՒՄ»

«Մենք չենք բացառում, որ հանդիպումը կլինի: Որեւէ ինֆորմացիա չկա, թե որտեղ է լինելու, բայց մենք կաղապարված չենք միայն Բրյուսելում հանդիպելու տարբերակով: Պատրաստ ենք յուրաքանչյուր բովանդակային քննարկման: Երեկ փոխվարչապետերն են հանդիպել, բայց երկրի ղեկավարների մասով դեռ կոնկրետ ինֆորմացիա չունենք»,- լրագրողների հետ ճեպազրույցում ասաց Ալեն Սիմոնյանը:

ՎՃԻՌԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵՑ

ԱՂՎԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ՏԱՆ ԹԱԼԱՆԸ

Արագածոտնի մարզի ընդհանուր իրավասության դատարանը հրապարակել է ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Աղվան Հովսեփյանի տան թալանի գործով վճիռը: ՀՀ նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանի տունը թալանած անձն ազատազրկման է դատապարտվել 5 տարի 3 ամիս ժամկետով:

Ինչպես հայտնի է, 2021 թվականի դեկտեմբերի 18-ին անհայտ անձը կամ անձինք տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Բյուրական գյուղի 3-րդ փողոցի տներից մեկի պատուհանը, մտել ներս եւ այնտեղից հափշտակել ոգելից խմիչքներ եւ հուշանվերներ: Հիշյալ տունը պատկանում է ՀՀ նախկին գլխավոր դատախազ Աղվան Հովսեփյանին: Ավելի ուշ հայտնաբերվեց գողություն կատարած անձը. վերջինս Հրանտ Գրիգորյանն է:

Վերջինիս մեղադրանք էր առաջադրվել, որ նա ապօրինի մուտք էր գործել Բյուրական գյուղի 3-րդ փողոցի 89-րդ հասցեում գտնվող, Նարեկ Հովսեփյանին պատկանող բնակարան, որտեղից գաղտնի հափշտակել է խոշոր չափի՝ ընդհանուր 2441260 ՀՀ դրամ արժողության ապրանքներ: Ի դեպ, այս առանձնատուն առաջին անգամ չէին մտել:

Նկատենք, որ մեղադրյալ Հրանտ Գրիգորյանը միջնորդել է կիրառել դատաքննության հատուկ կարգ՝համաձայնեցման վարույթ, եւ հայտնել, որ համաձայն է իրեն մեղսագրվող արարքին, միջնորդությունը ներկայացրել է կամավոր եւ գիտակցում է իր միջնորդության բնույթը եւ հետեւանքները:

Դատարան դիմում է ներկայացրել նաեւ նախկին գլխավոր դատախազի որդին՝ տուժող Նարեկ Հովսեփյանը, եւ հայտնել է, որ մեղադրյալի դեմ բողոք եւ պահանջ չունի, միաժամանակ չի առարկում համաձայնեցման վարույթ կիրառելու դեմ:

Եվ, ահա, Արագածոտնի մարզի դատավոր Սուրեն Մնոյանը հրապարակել է այս գործով վճիռը եւ Հրանտ Գրիգորյանին դատապարտել ազատազրկման՝ 5 տարի 3 ամիս ժամկետով: Քննիչի 30.05.2022թ. որոշմամբ՝ իրեղեն ապացույց ճանաչված եւ Ստեփան Մաթեւոսյանին ի պահ հանձնված ARMENIAN COGNAC, ARARAT EREBUNI- YEREVAN, ERIVAN 30 տեսակի կոնյակների դատարակ տուփերը, փայտե շրջանակը, ինչպես նաեւ 1 հատ պատյանով թուրը, 1 հատ գորգը, 1 հատ սրբապատկերը, ERIVAN տեսակի 2 շիշ կոնյակը, ARAME COLLECTIONS տեսակի 1 շիշ կոնյակը. Древний Эривань տեսակի 1 շիշ կոնյակը եւ EREBUNI YEREVAN 2796 տեսակի 1 շիշ կոնյակը հանձնել տուժող Նարեկ Հովսեփյանին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՎԱՐՈՒՅԹ

ՆՅՈՒԹԵՐՆ ՈՒՂԱՐԿՎԵԼ ԵՆ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչությունում ավարտվել է քրեակատարողական հիմնարկի նախկին կալանավոր, քրեական ասիճանակարգության բարձրագույն՝ «քրեական հեղինակության» կարգավիճակ ունեցող անձի կողմից քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու, քրեական ասիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային անհրաժեշտ գործողությունների արդյունքում հիմնավորվել է, որ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պատիժ կրող, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից, Տոլիկ մականունով հայտնի անձին վերջինիս՝ ՔԿՀ-ում գտնվելու ընթացքում դիմել են նույն հիմնարկում պատիժը կրող դատապարտյալներից պարտք-գումարները ստանալու նպատակով:

Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակից հիշյալ անձը իր անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով մասնավոր հարցին առնչվող վեճը լուծելու, այն է՝ պարտք-գումարը վերադարձնելու նպատակով, օգտվելով իր կարգավիճակից եւ իրականացնելով համապատասխան գործողություններ, ստանձնել է վեճերի լուծումը՝դրա դիմաց ստանալով անօրինական օգուտ:

Պարզվել է նաեւ, որ պատիժը կրելու ընթացքում Տոլիկ մականվամբ հիշյալ դատապարտյալին են դիմել, որպեսզի վերջինս իր անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով, իր կարգավիճակից օգտվելով, որոշակի առավելություն տրամադրի «Արմավիր» քրեակատարողական հիմնարկ տեղափոխված անձանց: Հարուցված քրեական հետապնդման հիման վրա ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ վարույթն իրականացնող մարմնի կողմից հիշյալ դատապարտյալին մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 223.3-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերով, որը համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 324-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին եւ 5-րդ կետերին:

Եվս մեկ դատապարտյալի մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 223.4-րդ հոդվածի 1-ին մասով, որը համապատասխանում է գործող Քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասին (քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը):

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերը՝երկու անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան ըստ էության քննության առնելու նպատակով:

ԼՈՒՐԵՐ

ԱՎԱՐՏՎԵՑ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

ՀՀ պաշտպանության նախկին նախարար Դավիթ Տոնոյանի պաշտպանական խումբը հայտարարություն է տարածել. «Դավիթ Տոնոյանի ձերբակալումից մեկ տարի եւ երեք ամիս անց վերջապես ավարտվեց մեղադրանքի կողմի գրավոր «ապացույցների» հետազոտումը, ինչպես նաեւ քննիչի կողմից փորձագետին ներկայացված հարցադրումների պատասխանների եւ հետեւությունների հետազոտումը, որի ընթացքում չներկայացվեց որեւէ փաստ, տվյալ, փաստաթուղթ, ինչը կարող էր հիմնավորել «վատնման» հանցակազմի առկայությունը, Դավիթ Տոնոյանին առաջադրված մեղադրանքում տեղ գտած որեւէ ձեւակերպում կամ այս ամբողջ ժամանակամիջոցում կալանավորման տակ գտնվելու անհրաժեշտությունը:

Ավելին, ներկայացված «ապացույցների» մի մասն առհասարակ վերաբերելի չէր մեղադրանքին կամ ոչինչ չէր հիմնավորում, իսկ մյուս մասը հերքում էր մեղադրանքը, որի վերաբերյալ պաշտպանական կողմը արել է համապատասխան հայտարարություններ եւ ներկայացրել է հակափաստարկներ: Ամեն դեպքում, կարող ենք վերահաստատել, որ Դավիթ Տոնոյանին կալանքի տակ պահելու հիմքեր չկան»:

Ո՞Վ Է ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾԸ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արմավիրում մեքենայի պայթյունի հետեւանքով 4-րդ անձն է հայտնաբերվել եւ կալանավորվել: Կալանավորվածը քրեական աշխարհում հայտնի Ծուխ անվանմամբ Արթուր Ասատրյանն է: Այս աղմկահարույց պայթյունի գործով երեք անձ այս պահին կալանքի տակ են եւ եւս մեկը կալանավորվեց:

Հիշեցնենք, որ պայթյունից մահացել էր Փարաքարում հայտնի Վարազդատ Բարոյանը, որը հայտնի է փարաքարցի Վարո անվամբ, իսկ թե ինչ հանգամանքներում է նրա մեքենան պայթել կամ միգուցե պայթեցվել, կպարզի քննությունը:

Փաստ է մեկ բան, որ կատարվածը խիստ անհանգստացրել է իրավապահներին, եւ տեւական ժամանակ նրանք փնտրում էին պայթյունը կազմակերպողներին:

ՄԵՂԱԴՐԱՆՔ Է ԱՌԱՋԱԴՐՎԵԼ

Armlur.am-ին հայտնի դարձավ, որ Արտյոմ Յարալյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իր կողմից օգտագործելու նպատակով կեղծել է պետական մարմնի՝ զորամասի կողմից տրվող, իրավունք վերապահող ազատ արձակման թերթիկը եւ կեղծ փաստաթուղթ օգտագործելու եղանակով ժամանակավորապես խուսափել զինվորական ծառայությունից:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝դեկտեմբերի 6-ից 7-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտել են հանցագործության 37 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԴ

ԲՅՈՒՋԵ ՉԵՆ ՄՏՆՈՒՄ ՄԵԾ ԳՈՒՄԱՐՆԵՐ

Նախկինում բազում փաստերով գրել եմ, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. փետրվարի 26-ին Դիլիջան խոշոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակված, 2021թ. հոկտեմբերի 17-ին կայացած ավագանու ընտրությունների արդյունքներով Դիլիջան համայնքի ղեկավար ընտրված Դավիթ Սարգսյանը, բացի Դիլիջան համայնքի բնակիչներին հողեր օտարելուց, Դիլիջան քաղաքի հողերը ձեւական աճուրդներով, շուկայականից ցածր գներով օտարել է Երեւանի բնակիչների: Դիլիջանի համայնքապետարանը շարունակում է քաղաքի հողերը ձեւական աճուրդներով, էժան գներով օտարել Երեւան քաղաքի բնակիչների: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է , որ, Դիլիջան համայնքի ղեկավարի 2022թ. հոկտեմբերի 13-ի թիվ 745-Ա որոշմամբ, 2022թ. նոյեմբերի 14-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 5000.0քմ հողամաս /Լոտ-60(ՔՋ-22)/՝ Դիլիջան քաղաքի Արցախի փողոցի թիվ 12 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 35000000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 35000000 դրամ առավելագույն գնով հաղթել է Երեւան քաղաքի Գ. Նժդեհ փողոց 27/1 շ. բն. 33 հասցեի բնակիչ Արթուր Հարությունյանը, որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 5 արձանագրությունը: Դիլիջան համայնքի ղեկավարի՝ 2022թ. հոկտեմբերի 13-ի թիվ 745-Ա որոշմամբ՝2022թ. նոյեմբերի 14-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 3400.0քմ հողամաս /Լոտ-61(ՔՋ-22)/՝ Դիլիջան քաղաքի Արցախի փողոցի թիվ 14 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 23800000 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 23800000 դրամ առավելագույն գնով հաղթել է «ԴԻԼԻ ՏՐՈՊԻԿ» ՍՊԸ-ն (գտնվելու վայրը՝ Երեւան քաղաք, Դավիթ Անհաղթի փողոց 23 շ., 6-րդ հարկ), որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 6 արձանագրությունը: Դիլիջանի համայնքի ղեկավարի՝ 2022թ. հոկտեմբերի 13-ի թիվ 745-Ա որոշմամբ՝2022թ. նոյեմբերի 14-ին աճուրդի է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի հողերից 6281.7քմ հողամաս /Լոտ-62(ՔՋ-22)/՝ Դիլիջան քաղաքի Հովքի փողոց 3-րդ նրբ. թիվ 1/1 հասցեում բնակելի կառուցապատման նպատակով, 43971900 դրամ մեկնարկային գնով: Կայացած աճուրդում 43971900 դրամ առավելագույն գնով հաղթել է Նոր Հաճն քաղաքի Իսահակյան փողոց 5 շ., բն. 15 հասցեի բնակիչ Սերոբ Ներսիսյանը, որի մասին հողամասերն աճուրդային կարգով օտարող հանձնաժողովի կողմից կազմվել է թիվ 7 արձանագրությունը: Շուկայականից էժան գներով, ձեւական աճուրդներով Դիլիջան համայնքի, Երեւանի եւ Հայաստանի այլ բնակավայրերի բնակիչներին Դիլիջան քաղաքի հողերը մեծ թափով օտարելու հետեւանքով Դիլիջան խոշոր համայնքի բյուջե չի մտնում հարյուրավոր միլիոն դրամներ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԺԱՄԿԵՏՆԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով սահմանվել են պետական ավարտական քննությունների ժամանակացույցը եւ աշխատակարգը:

Աշխատակարգով կարգավորվում է հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգման, 9-րդ դասարաններում՝ ավարտական, եւ 12-րդ դասարաններում՝ պետական ավարտական քննությունների անցկացման գործընթացը, որը ներառում է քննությունների հայտագրումը, կազմակերպումը, անցկացումը, ստուգումը, գնահատումը, արդյունքների հրապարակումը եւ բողոքարկումը:

4-րդ դասարանում գիտելիքների ստուգումն անցկացվում է՝

ο «Մայրենի» առարկայից՝ գրավոր (թեստ),

ο «Մաթեմատիկա» առարկայից՝գրավոր (թեստ),

ο ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար՝նաեւ «Ռուսաց լեզու» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում,

ο ազգային փոքրամասնությունների դասարաններում՝նաեւ իրենց մայրենի լեզու եւ գրականություն առարկայից՝բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

Գիտելիքների ստուգման առաջադրանքների թեստերը (առնվազն 4 տարբերակ) կազմում են հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված նմուշների: 4-րդ դասարաններում գիտելիքների ստուգումն անցկացվում է հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝15 օրվա ընթացքում:

9-րդ դասարանի սովորողները հանձնում են ավարտական քննություններ՝

ο «Հայոց լեզու» առարկայից՝ գրավոր թեստ,

ο «Գրականություն» առարկայից՝ բանավոր,

ο «Հայոց պատմություն» առարկայից՝բանավոր,

ο «Մաթեմատիկա» առարկայից՝գրավոր,

ο «Բնագիտություն» («Ֆիզիկա», «Քիմիա», «Կենսաբանություն», «Աշխարհագրություն»՝ սովորողի ընտրությամբ) առարկայից՝գրավոր (թեստ),

ο «Օտար լեզու» («Ռուսերեն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն» եւ այլ լեզուներ սովորողի ընտրությամբ) առարկայից՝բանավոր,

ο «Ֆիզկուլտուրա» առարկայից՝քննաշրջանի ընթացքում (նորմատիվների հանձնում),

ο ռուսերենով ուսուցմամբ դասարանների սովորողների համար սահմանված գիտելիքների ստուգումն անցկացվում է նաեւ «Ռուս գրականություն» առարկայից՝բանավոր՝ քննաշրջանի ընթացքում,

ο ազգային փոքրամասնությունների դասարանների սովորողների համար անցկացվում է նաեւ գիտելիքների ստուգում «Մայրենի լեզու եւ գրականություն» առարկայից՝ բանավոր՝ քննաշրջանի ընթացքում:

«Գրականություն», «Հայոց պատմություն» եւ «Օտար լեզու» առարկաների 9-րդ դասարանների ավարտական քննությունների տոմսերը կազմում են հաստատության մեթոդմիավորումները՝ ըստ ԳԹԿ-ի կողմից մշակված եւ տրամադրված հարցաշարերի եւ տոմսերի նմուշների: «Գրականություն» եւ «Օտար լեզու» առարկանեի ավարտական քննական առաջադրանքների հարցաշարերը եւ տոմսերի նմուշները կազմվում են 7-9-րդ դասարանների ծրագրային նյութից, «Հայոց պատմություն» առարկայի քննական առաջադրանքները՝ 6-9-րդ դասարանների ծրագրային նյութից:

9-րդ դասարաններում ավարտական քննություններն անցկացվում են հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝30 օրվա ընթացքում: 9-րդ դասարանի ավարտական քննություններ հանձնողների հայտերը հաստատության տնօրենը լրացնում եւ ԳԹԿ-ին է փոխանցում փետրվարի 20-ից մինչեւ մարտի 15-ը:

12-րդ դասարանում շրջանավարտները հանձնում են պետական ավարտական քննություններ՝

ο «Հայոց լեզու եւ հայ գրականություն» առարկայից՝գրավոր (թեստ),

ο «Հայոց պատմություն» առարկայից՝ գրավոր (թեստ),

ο «Մաթեմատիկա» առարկայից՝գրավոր (թեստ),

ο «Ֆիզկուլտուրա» առարկայից՝ նորմատիվների հանձնում (ստուգարք)՝հունիսի 6-րդ աշխատանքային օրվանից մինչեւ քննաշրջանի ավարտն ընկած ժամանակահատվածում,

ο «Ռուս գրականություն» առարկայից՝ բանավոր (ռուսերենով ուսուցմամբ դասարանների համար)՝ քննաշրջանի ընթացքում,

ο «Մայրենի լեզու եւ գրականություն» առարկայից՝ բանավոր (ազգային փոքրամասնությունների դասարանների համար)՝ քննաշրջանի ընթացքում:

12-րդ դասարաններում պետական ավարտական քննություններն անցկացվում են հունվարի երկրորդ շաբաթվա առաջին աշխատանքային օրվանից՝10 օրվա ընթացքում, եւ հունիսի առաջին աշխատանքային օրվանից՝ 30 օրվա ընթացքում: Հունվարին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչեւ դեկտեմբերի 10-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին. հեռավար ուսուցման դեպքում կարելի է դիմել էլեկտրոնային փոստով: Հաստատության տնօրենը դեկտեմբերի 15-ից մինչեւ 30-ը՝ ժամը 12:00-ն, քննություններ հանձնողների դիմում-հայտերը էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին: Հունիսին կազմակերպվող պետական ավարտական քննություններին մասնակցելու համար սովորողները մինչեւ ապրիլի 1-ը գրավոր դիմում են հաստատության տնօրենին: Հաստատության տնօրենն ապրիլի 1-ից մինչեւ մայիսի 2-ը ներառյալ քննություններ հանձնողների դիմում-հայտերն էլեկտրոնային եղանակով փոխանցում է ԳԹԿ-ին: Միասնական քննությանը մասնակցող սովորողը պետական ավարտական քննություն կարող է հանձնել այն առարկայից, որը չի հանձնելու միասնական քննությունների համակարգով: Եվ հունվարին, եւ՛ հունիսին միասնական քննություններ հանձնած սովորողի ավարտական փաստաթղթում լրացվում է միասնական քննության ավարտական մասի ավելի բարձր դրական գնահատականը: Միեւնույն առարկայից եւ՛ միասնական, եւ՛ պետական ավարտական քննություն հանձնելու դեպքում միջնակարգ կրթության ատեստատում լրացվում է միասնական քննության ավարտական մասի գնահատականը (միավորը): 9-րդ եւ 12-րդ դասարանում ավարտական եւ պետական ավարտական քննական առարկաների թեստերը կազմում է ԳԹԿ-ն, առաջադրանքներն ընտրվում են ԿԳՄՍ նախարարության կողմից երաշխավորված շտեմարաններից եւ հաստատությունում գործածվող դասագրքերից եւ (կամ) ձեռնարկներից: Ուսման մեջ գերազանց առաջադիմության համար ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարության գերազանցության մեդալի հավակնորդները «Հայոց լեզու եւ հայ գրականություն» եւ «Մաթեմատիկա» առարկաներից միասնական քննություններին կարող են մասնակցել հունվարին կամ հունիսին, իսկ նույն առարկաները որպես ավարտական քննություններ ընտրելու դեպքում՝ միայն հունիսին: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ մտավոր հետամնացություն ունեցող սովորողների՝ հաջորդ դասարան փոխադրումը կատարվում է անհատական ուսուցման պլանով իրականացված գնահատման հիման վրա (ԱՈՒՊ):

104-ԱՄՅԱԿ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ՝ ArmLur.am ԿԱՅՔԻՆ

Հայաստանի փաստաբանական համայնքն Ադրբեջանից մի քիչ է փոքր տարիքով. նկատեց ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն, փաստաբան Արա Զոհրաբյանը: Հիմնադրվել է 104 տարի առաջ՝ 1918 թվականին: Փաստաբանները երեկ տոնում էին իրենց մասնագիտական տոնը՝ միեւնույն ժամանակ իրենց շարքերը ընդունելով նոր՝ երիտասարդ փաստաբանների:

Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանի խոսքով՝ յուրաքանչյուր փաստաբանի հաջողություն փաստաբանական համայնքի հաջողությունն է: Փաստաբանների գործունեությունը, փաստաբանների հետ համագործակցությունը հնչեղություն ունեցող գործերով ակտիվ լուսաբանման համար փաստաբանական համայնքը գնահատեց նաեւ լրատվամիջոցների աշխատանքը. շնորհակալագրեր ստացան նաեւ մի շարք լրատվամիջոցներ: ArmLur.am-ը կայքը փաստաբանական ինստիտուտի հետ ակտիվ համագործակցության, փաստաբանների հետ արդյունավետ աշխատանքի եւ իրավական ոլորտի խնդիրները պատշաճ լուսաբանելու համար արժանացավ շնորհակալագրի:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 9 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 12-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԻՆՉ ԵՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ՝ առաջարկելով ներդնել Հայաստանի Հանրապետության մշակույթի պահպանության եւ զարգացման 2023-2027 թթ. ռազմավարությունը եւ հաստատել ռազմավարության գործողությունների պլանը: Այն այժմ դրվել է հանրային քննարկման: Գործողությունների ծրագրից ArmLur.am-ը տեղեկացավ, որ առաջարկվում է, օրինակ, գործունեություն ծավալող ժողովրդական վարպետների մասին տվյալների բանկի կազմում, անկախության շրջանի մշակութային ժառանգության գույքագրում եւ ինստիտուցիոնալացում, մշակութային ժառանգության ոլորտում նոր հաստատությունների ստեղծում: Ընդ որում, այս գործողություններից շատերի վերջնաժամկետ որպես նախատեսված է 2027 թվականը: Մինչեւ այդ թվականի ավարտը նախատեսվում է նաեւ իրականացնել թանգարանային մասնագետների վերապատրաստում միջազգային փորձին համապատասխան, ինչպես նաեւ գրադարանային մասնագետների վերապատրաստում: Նախագծում նաեւ վիճակագրական տվյալներ են առկա: Ըստ այդմ, ՀՀ վիճակագրական կոմիտեի 2021թ. սոցիալ-տնտեսական վիճակի հաշվետվության համաձայն՝ մշակույթ, զվարճություններ եւ հանգիստ ուղղությամբ 2021 թ. դեկտեմբերին եկամուտը կազմել է՝ 22 005.5 մլն դրամ, 2020 թ. դեկտեմբերին՝ 99.9 %, 2021 թ. դեկտեմբերին՝ 113.8%, 2021 թ. հունվար-դեկտեմբեր՝ 234 232.9 մլն դրամ, ընդամենը՝ 12.5, 2021 թ., 2020 թ. նկատմամբ՝ 68.5, այդ թվում՝ ստեղծագործական, արվեստի եւ հանդիսավոր ներկայացումների, գրադարանների, արխիվների, թանգարանների եւ այլ մշակութային կազմակերպությունների գործունեությունը 2021 թ. կազմել է 3 806.5 մլն դրամ, որը 2020 թ. համեմատությամբ կազմել է 165.9%:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՎԹԱՐԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ

Վթարային շենքերի վերաբերյալ կառավարության 2021-2026 թվականների ծրագրով ունենք ծրագիր, որով հիմնական աշխատանքները կսկսվեն 2024 թվականին, եւ 2026-ին հանրապետության մասշտաբով վթարային շենքերի 70 տոկոսի խնդիրը պետք է լուծված լինի: Այս մասին երեկ՝ դեկտեմբերի 7-ին՝ Գյումրիում լրագրողների հետ ճեպազրույցի ընթացքում, հայտարարեց ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանը: «Այս տարի նախապատրաստական աշխատանքներ են տարվում, իսկ հիմնական ծրագիրը կսկսվի 2024-ին, ավարտը կլինի 2026-ին»,-ասաց նա: Նշենք, որ 11:41-ին Գյումրի այցելած բարձրաստիճան պաշտոնյաները՝ ՀՀ փոխվարչապետ Համբարձում Մաթեւոսյանի գլխավորությամբ, ինչպես նաեւ դիվանագիտական ու ուժային կառույցների ներկայացուցիչները գյումրեցիների հետ ծաղիկներ խոնարհեցին «Անմեղ զոհերին, բարեգութ սրտերին» հուշակոթողի մոտ եւ մեկ րոպե լռությամբ հարգանքի տուրք մատուցեցին 1988 թվականի ավերիչ երկրաշարժի զոհ դարձածների հիշատակին:

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԲԱՆԱԼԻՆ՝ ՄԵԾԱՄՈՐՈՒՄ

Հրազդանի մշակույթի տանը տեղի են ունեցել երիտասարդական մայրաքաղաքի խորհրդանշական բանալին հանձնելու հանդիսավոր արարողությունը եւ «ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի ամփոփիչ միջոցառումը, որին մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը:

«Հրազդանի՝ երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի ամփոփիչ միջոցառմանը ներկա են եղել նաեւ ԿԳՄՍՆ երիտասարդական քաղաքականության, լրացուցիչ եւ շարունակական կրթության վարչության պետ Զարա Ասլանյանը, վարչության գլխավոր մասնագետ Վերոնիկա Խորասանյանը, Հրազդան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարուժան Սաֆարյանը, Մեծամոր քաղաքի պատվիրակությունը՝ համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանի գլխավորությամբ, հասարակական եւ երիտասարդական կառույցների ներկայացուցիչներ, ուսումնարանների, դպրոցների տնօրեններ ու աշակերտներ: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել Հրազդան համայնքի ղեկավարությանը, համայնքապետարանի ողջ անձնակազմին, հասարակական եւ երիտասարդական կառույցների ներկայացուցիչներին ՀՀ 2022 թվականի երիտասարդական մայրաքաղաք տիտղոսը պատվով կրելու, այս ծրագրին ամենայն պատասխանատվությամբ մոտենալու համար:

«Անչափ ուրախ եմ, որ կրկին առիթ է ընձեռվել հյուրընկալվելու մեզ արդեն հարազատ դարձած Հրազդանում, որը Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության «ՀՀ տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի շնորհիվ մի ամբողջ տարի դարձել էր երիտասարդական բազմաբնույթ միջոցառումների կենտրոն: «Տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը ՀՀ երիտասարդական պետական քաղաքականության առանցքային միջոցառումներից մեկն է եւ հիանալի գործիք է հենց մարզերի երիտասարդական ներուժի բացահայտման, համայնքի երիտասարդության ինքնաճանաչման համար»,- փաստել է նախարարի տեղակալը: Արթուր Մարտիրոսյանի խոսքով՝ նախանշված աշխատանքներն արդյունավետ ու բազմաշերտ իրականացնելու համար շատ կարեւոր է ԿԳՄՍ նախարարության, քաղաքային իշխանությունների եւ տեղի երիտասարդական կառույցների համագործակցությունը. «Հրազդանի պարագայում կարող եմ ասել, որ այն հաջողությամբ է պսակվել, ինչի ապացույցն էլ քիչ առաջ ներկայացված հաշվետու տեսահոլովակն էր: Ես Հրազդանին մաղթում եմ, որ 2022 թ. համայնքի համար լինի մեկնարկային տարի, եւ այն աշխատանքները, որոնք այս մեկ տարվա ընթացքում իրականացվել են կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության ոլորտներում, շարունակական ու առավել արդյունավետ լինեն»:

ԿԳՄՍ նախարարի տեղակալը նաեւ նշել է, որ Հրազդանի՝ տարվա երիտասարդական մայրաքաղաք հռչակվելուց հետո նախարարությունը, բացի գործընկեր կազմակերպություններից, նաեւ ԿԳՄՍՆ մյուս վարչություններին էր կոչ արել իրենց միջոցառումները մասնակի կամ ամբողջական ծավալով իրականացնել Հրազդանում. «Եվ ես մեծ ուրախությամբ եմ արձանագրում, որ նախարարության կոչին արձագանքել են թե՛ նախարարության մի շարք վարչություններ, թե՛ տեղական, թե՛ մեր գործընկեր միջազգային կառույցներ՝ իրենց միջոցառումների իրականացման վայր ընտրելով երիտասարդական մայրաքաղաք Հրազդանը: Սա վկայում է այն մասին, որ «Երիտասարդական մայրաքաղաք» ծրագիրը վաղուց դուրս է եկել ՀՀ ԿԳՄՍՆ տիրույթից եւ դարձել հանրության, մասնավորապես՝ հաղթող համայնքի ծրագիրը»:

Արթուր Մարտիրոսյանը նաեւ շնորհավորել է Մեծամոր քաղաքին 2023 թվականի ՀՀ երիտասարդական մայրաքաղաք հռչակվելու կապակցությամբ՝ նշելով, որ նախարարությունը պատրաստակամ է աջակցելու Մեծամորի քաղաքային իշխանությանը ծրագիրն իրագործելու հարցում: Հրազդան համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վարուժան Սաֆարյանը փաստել է, որ «Երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի շրջանակում Հրազդանում տեղի են ունեցել մշակութային, մարզական, երիտասարդական եւ միջազգային կարեւոր իրադարձություններ, ինչպես նաեւ շնորհակալություն է հայտնել ԿԳՄՍՆ գործընկերներին արդյունավետ համագործակցության, համայնքին աջակցելու համար եւ շնորհավորել ու հաջողություն մաղթել Մեծամորի ներկայացուցիչներին: Այնուհետեւ Վարուժան Սաֆարյանը երիտասարդական մայրաքաղաքի խորհրդանշական բանալին հանձնել է Մեծամոր համայնքի ղեկավար Վահրամ Խաչատրյանին, որը նույնպես շնորհակալություն է հայտնել ծրագրի նախաձեռնողներին՝ ընդգծելով, որ 2023 թ. Մեծամոր համայնքը եւս ակտիվություն կցուցաբերի ծրագրի շրջանակում:

Միջոցառման ընթացքում ԿԳՄՍ նախարարության շնորհակալագրեր են հանձնվել «ՀՀ 2022 թ. երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի միջոցառումներում ակտիվ մասնակցություն ցուցաբերած եւ արդյունավետ գործունեություն ծավալած հասարակական կազմակերպությունների ու համայնքային կառույցների ներկայացուցիչներին:

Հրազդանում ամփոփիչ միջոցառումը եզրափակվել է «Մարաթուկ» համույթի համերգային ծրագրով:

Նշենք նաեւ, որ 2023 թվականի «Տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի համար հայտ էր ներկայացրել 2 քաղաք՝ Ծաղկաձորը (ՀՀ Կոտայքի մարզ) եւ Մեծամորը (ՀՀ Արմավիրի մարզ): Հայտերի գնահատման գործընթացի ամփոփիչ փուլի ընթացքում փորձագիտական գնահատման եւ կարճ հաղորդագրությամբ (SMS) քվեարկության արդյունքների համադրմամբ մրցութային հանձնաժողովը Հայաստանի 2023 թվականի երիտասարդական մայրաքաղաք է հռչակել Մեծամորը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԾԱԽՍԵՐՆ ՈՒ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՆ ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ

2023 թվականի համար ծախսերն ու եկամուտներն ավելանալու են: 2023 թվականի պետական բյուջեի մասին օրենքի նախագծի լրամշակված նախագիծն արդեն քննարկվել է Ազգային ժողովում:

Նախորդ նախագծի համեմատությամբ բյուջեի ծախսերում ավելացել է 826 մլն դրամ, եկամուտներն ավելացել են 734.5 մլն դրամով եւ կազմում են 2 տրլն 302 մլրդ դրամ: Հարկային եկամուտները չեն փոփոխվել եւ սահմանված են 2 տրլն 203.7 մլրդ դրամ չափով: Տեղեկացանք, որ եկամուտների ավելացումը կատարվել է այլ եկամուտների եւ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: ArmLur.am-ը տեղեկացավ, որ 2023 թվականի պետբյուջեի նախագծի փոփոխություններն ունեն մի քանի պատճառ: Նախ արտարժութային գործառնությունների դրամային համարժեքները վերահաշվարկվել են նոյեմբերի 1-ի փոխարժեքով, այդ վերահաշվարկը ճշգրտումներ է առաջացրել պետբյուջեի եկամուտների, ծախսերի, նաեւ դեֆիցիտի դրամային համարժեքներում: Փոփոխության երկրորդ պատճառն այն է, որ ծրագրերի համակարգողները լրամշակել են որոշակի ծրագրերին վերաբերող փաստաթղթային հիմնավորումները, ինչի արդյունքում որոշ դեպքերում ավելացել են այդպիսի ծրագրերին հատկացվող բյուջետային միջոցները: Որոշ դեպքերում 2023-ի պետբյուջեի ծախսային ավելացումները պայմանավորված են այն հանգամանքով, որ 2022-ին նախատեսված ծախսերի մի մասը չեն իրականացվել այս տարվա ընթացքում ամբողջությամբ եւ այդ մասով ներառվել են հաջորդ տարվա ծրագրային անելիքների ցանկում:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՏԱՊԱԼՎԱԾ ԾՐԱԳԻՐ

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՉԱԽՈՂԵՑ

Դեկտեմբերի 10-ին եւ 11-ին Երեւանում կայանալիք «Մանկական Եվրատեսիլ-2022» երգի միջազգային մրցույթի տոմսերն այս տարի վաճառվել են կայծակնային արագությամբ, արժեքն էլ 3 հազարից 20 հազար եւ 5 հազարից 30 հազար դրամ է եղել: Այս հանգամանքը մեծ աղմուկ է բարձրացրել, քանի որ եղել են մեծ թվով քաղաքացիներ, որոնք չեն կարողացել տոմսեր գնել:

Այնպիսի տպավորություն է, որ «Եվրատեսիլ»-ի կազմակերպիչները, Հանրային հեռուստաընկերությունից սկսած մինչեւ վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյան, հատուկ կազմակերպված են գործել, որպեսզի տոմսերը ստվերային ձեւով վաճառեն կամ լավության կարգով նվիրեն իրենց ցանկալի մարդկանց:

ArmLur.am-ի խմբագրություն եւս քաղաքացիներ են ահազանգել՝ հայտնելով, թե մի քանի անգամ tomsarkgh.am կայքով փորձել եւ չեն կարողացել գնել անգամ մեկ տոմս, քանի որ եղել են տեխնիկական խափանումներ: «Հենց կայքը բացվեց, ես փորձեցի գնել, չկարողացա… Հետո կայքը խափանվեց, ու վերջում գրվեց՝ սպառված են տոմսերը»,- պատմեց մեր զրուցակից քաղաքացին:

Ինչպես արդեն նշեցինք, Հանրային հեռուստաընկերությունը «Մանկական Եվրատեսիլ 2022» երգի միջազգային մրցույթի տոմսերի վաճառքն իրականացրել է tomsarkgh.am կայքի միջոցով եւ փաստացի տապալել այն: Եվ այստեղ հարց է առաջանում՝ ինչո՞ւ է տոմսերի վաճառքը բացառապես իրացրել միայն մեկ ընկերություն: Ինչո՞ւ կառավարությունը այնպես չի հաշվարկել, որ ողջ ծանրաբեռնվածությունը չընկնի միայն մեկ ընկերության վրա, որի արդյունքում էլ ունեցանք դժգոհ քաղաքացիների հոծ բազմություն ու տոմսերի վաճառքի տապալում:

ArmLur.am-ը փորձեց պարզել, թե ինչու չեն կարողացել տոմսերի վաճառքը պատշաճ իրականացնել, որպեսզի տոմսեր գնել ցանկացող քաղաքացիները նման խնդրի առջեւ չկանգնեին: Կայքի աշխատակիցը մեզ հետ զրույցում պարզաբանեց. «Տոմսերը հիմա սպառվել են: Երկրորդ փուլի վաճառքը եղել է կիրակի երեկոյան եւ այդ օրն էլ սպառվել է: Կայքը խափանվել է, քանի որ շատ մեծ է եղել հոսքը, բայց մարդիկ կան, որոնց մոտ ստացվել է գնել տոմսը: Միաժամանակ այդքան մարդ որ այդ կայքում լինի, այն կխափանվի», -նկատեց նա:

Աշխատակիցը նշեց, թե հաշվի առել էին այդ հանգամանքը, բայց խափանումից խուսափել չի հաջողվել: Ամեն դեպքում, աշխատակիցը չտրամադրեց նաեւ տեղեկատվություն, թե մինչեւ օրս երկու օրերի համար որքան տոմս է վաճառվել: Այս տեղեկությունը պաշտպանվում է ռազմական գաղտնիքի նման:

Բայց որքան էլ այժմ փորձում են արդարացումներ գտնել եւ մեղքը բարդում են տեխնիկական խնդիրների վրա, այնուամենայնիվ, փաստ է, որ Հանրային հեռուստաընկերությունը եւ tomsarkgh.am-ը համատեղ չեն կարողացել պատշաճ եւ անխափան կազմակերպել տոմսերի վաճառքի գործընթացը, որպեսզի ոչ ոք փաստի առջեւ չկանգներ, եւ մրցույթին որպես հանդիսատես մասնակցել ցանկացողներն իսկապես կարողանային գնել այն եւ ներկա գտնվել:

Հավելենք, որ հենց տոմսեր գնելու էջում օգտատերերը բազմաթիվ բացասական մեկնաբանություններ են թողել եւ նշել, թե տոմսեր գնել չեն կարողացել: Անգամ տեղեկություններ են շրջանառվում, թե կան մարդիկ, որոնք մեծ թվով տոմսեր են գնել զարտուղի ճանապարհով, որպեսզի դրանք հետագայում կրկնակի գնով վաճառեն ուրիշներին:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԿԸՆԴԳՐԿՎԻ ԾՐԱԳՐԵՐՈՒՄ

Հայաստանի ազգային պատկերասրահը միացել է «Իմպրեսիոնիզմի ուղիներ» նախագծին, որով ընդլայնվում է Հայաստանի ներգրավվածությունը Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ծրագրին:

Նոյեմբերի 29-ին «Իմպրեսիոնիզմի ուղիների» գլխավոր ասամբլեայի նիստում Հայաստանի ազգային պատկերասրահը պաշտոնապես ընտրվել է նախագծի անդամ:

Այս համագործակցությունը նոր հնարավորություններ է ստեղծում եվրոպական մշակութային համայնապատկերում հայկական մշակույթի հանրահռչակման, միջմշակութային երկխոսության եւ համատեղ նոր ծրագրերի իրականացման համար:

«Մշակութային ուղիներ» ծրագիրը մեկնարկել է 1987 թվականին Եվրոպայի խորհրդի կողմից: Ծրագրի նպատակն է ստեղծել մշակութային երկխոսության հարթակ՝ նպաստելով բնության եւ մշակութային ժառանգության պահպանությանը եւ առաջընթացին՝ որպես մշակութային, սոցիալական կայուն զարգացման կարեւորագույն գործոնի՝ միաժամանակ ցույց տալով, թե ինչպես է եվրոպական տարբեր երկրների մշակութային ժառանգությունը նպաստում համընդհանուր մշակութային ժառանգության պահպանությանը եւ տարածմանը: Հայաստանը միացել է Եվրոպայի խորհրդի «Մշակութային ուղիներ» ընդլայնված մասնակի համաձայնագրին 2015 թվականին եւ այս պահին ներառված է «Գինու» (Iter Vitis) եւ «Իմպրեսիոնիզմի» ուղիներում:

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թողարկվել է Bethesda Game Studios-ի բավականին հին, բայց գեյմերների շրջանում դեռեւս շատ տարածված խաղի՝ The Elder Scrolls V: Skyrim-ի հավակնոտ մոդիֆիկացիան՝ Warden of the Coast-ը, որը խաղացողներին առաջարկում է նոր՝ ոչ գծային պատմություն եւ Mass Effect-ի եւ Dragon Age-ի ոճով ուղեկիցներ:

Ինչպես տեղեկացնում է PC Gamer պորտալը, նոր ռեժիմով առաջարկվող սյուժեի շնորհիվ խաղում կավելանա 10-15 խաղային ժամ: Այն նաեւ առաջարկում է բազմաթիվ նոր վայրեր եւ լիարժեք ձայնային հնչյունավորում. 27 դերասաններ դրա համար 9000 տող երկխոսության են կարդացել:

Նոր տարբերակում ավելացել են նաեւ ինը ուղեկիցներ, որոնցից յոթի հետ խաղացողները կարող են սիրավեպ ունենալ, ինչպես վերը նշված Mass Effect-ում եւ Dragon Age-ում: Ավելին, այս տարբերակի հեղինակը նախատեսում է խաղում ներդնել ընտրված կերպարի հետ խաղի վերջում ամուսնանալու հնարավորություն: Յուրաքանչյուր ուղեկից ունի իր հավատարմության առաքելությունը, ավելին՝ նրանց վերաբերմունքը խաղացողի կերպարի նկատմամբ կախված կլինի նրա կայացրած որոշումներից ու գործողություններից:

Ըստ Warden of the Coast-ի սյուժեի՝ խաղացողը կգնա հեռավոր կղզի, որտեղ պետք է փակի Օբլիվիոնի դարպասները եւ կանգնեցնի Դեդրիկների արքայազնին: Քանի որ խաղի այս ռեժիմի սյուժեն ոչ գծային է, ավարտը նույնպես մեկը չէ. կախված իր սեփական որոշումներից՝ խաղացողին սպասվում է հինգ հնարավոր վերջաբան:

Warden of the Coast-ը նախատեսված է 5-50 մակարդակի կերպարների համար:

ՈՉԻՆՉ ԿԱԽՎԱԾ ՉԷ ՌՈՆԱԼԴՈՒԻՑ

Աշխարհի առաջնության 1/8 եզրափակչում Շվեյցարիայի թիմին 6:1 հաշվով հաղթելուց հետո Պորտուգալիայի հավաքականի եւ Մադրիդի «Աթլետիկոյի» 23-ամյա հարձակվող Ժոաու Ֆելիշը անդրադարձել է մեկնարկային կազմում 37-ամյա հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուի բացակայությանը: Նա 73-րդ րոպեին փոխարինել էր Ֆելիշին:

«Մեր հաջող կամ անհաջող խաղը կախված չէ Ռոնալդուից: Լինում են հաջող խաղեր, երբ ամեն ինչ ստացվում է, լինում են նաեւ անհաջող խաղեր, երբ ոչինչ չի ստացվում, բայց այդ ամենը կախված չէ միայն Ռոնալդուի ներկայությունից կամ բացակայությունից խաղադաշտում»,- ասել է Ֆելիշը:

Պորտուգալիան երրորդ անգամ հանդես կգա աշխարհի առաջնությունների քառորդ եզրափակչում: Մրցակիցը կլինի Մարոկկոն, որն առաջին անգամ է դուրս եկել ԱԱ-ի քառորդ եզրափակիչ՝ հետխաղային 11-մետրանոցներով պարտության մատնելով Իսպանիային:

● *Դեկտեմբերի 9-ին Երեւանի պետական կամերային թատրոնում տեղի կունենա «Հինգ պատմություն սիրո մասին» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՞Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Սարիբեկ Սեդրակյան (59 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաեւ սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Նելլի Սաղաթելյան 19 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաեւ նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչեւ անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջեւ առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Տաթեւ-«Սատանի կամուրջ» ավտոճանապարհին

Արտակարգ իրավիճակ է ստեղծվել Սյունիքի մարզի Տաթեւ-«Սատանի կամուրջ» ավտոճանապարհին. պատճառը մի քանի կմ հատվածում մերկասառույցն է, իսկ ճանապարհը սպասարկող ընկերությունը, որի աշխատավայրը, ըստ տեղեկությունների, Գորիսում է, մատը մատին չեն խփել, որպեսզի կատարեն ճանապարհի մշակման աշխատանքներ: Եթե ճանապարհը սպասարկող ճանշինականները մի քիչ սրտացավություն ունենային ու ժամանակին կատարեին ձնամաքրման աշխատանքներ, ապա այս «սոդոմ-գոմոր» վիճակը չէր լինի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **7.12.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: